

## **Lopes Gomes Da Silva v Portugal (2000), Application no. 37698/97, Լոպես Գոմես Դա Սիլվան ընդդեմ Պորտուգալիայի (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Թեման՝ Զրպարտություն

Ենթաթեման՝ փաստերի վերաբերյալ շարադրանք և գնահատողական դատողություններ

Թեսթը՝ անհրաժեշտությունը

Սանկցիան՝ ֆինանսական

Վճիռը՝ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Պորտուգալիա

### **Գործի փաստական հանգամանքները**

Դիմումատուն Պորտուգալիայի քաղաքացի Վինսենտ Զորջ Լոպես Դա Սիլվան է, որը Պորտուգալիայի ամենավաճառվող օրաթերթի խմբագիրն է: 1993թ. Օրաթերթը տպագրում է մի հոդված, որով մասնավորապես ասվում էր, որ ժողովրդական կուսակցությունը խնդրել է պարոն Սիլվա Ռեսենդին, որը իրավաբան և լրագրող է, իրենց կուսակցության անունից առաջադրվել որպես թեկնածու Լիսբոնի մունիցիպալ ընտրություններին: Նույն էջին դիմումատուն տպագրում է խմբագրական, որտեղ քննադատում է այս հրավերը և մասնավորապես պնդում է, որ «... ավելի գրոտեսքային և ծաղրածուական թեկնածու գաղափարական տեսանկյունից չի կարող որևէ տեղ գտնվել, կամ ռեակտիվ կոպտության, ֆաշիստական նվիրվածության և վուլգար հակասեմիտիզմի այդպիսի անհավատարմի խառնուրդ .....»: Օրաթերթի նույն համարում պարոն Սիլվա Ռեսենդի վերջին հոդվածներից բազմաթիվ հատվածներ տպագրվեցին, որտեղ ի թիվս այլ բաների, նա գովում էր նախկին նախագահ Սալազարին, Ազգային Սահմանային կուսակցությանը և նրա ղեկավար Լյո Պենին, բնութագրում էր այն ժամանակվա վարչապետին որպես «ճաղատ հրեայի» և քննադատում էր 1974 թվականի Պորտուգալիայի հեղափոխությունը: Պարոն Սիլվա Ռեսենդը քրական գործ է հարուցում դիմումատուի դեմ, որը այնուհետև մեղադրվում է քրեական զրպարտության մեջ մամուլի միջոցով: 1995թ. Լիսբոնի քրեական դատարանը արդարացրել է դիմումատուին, սակայն Սիլվա Ռեսենդի և դատախազության բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը բեկանել է այդ վճիռը: Նրա նկատմամբ նշանակվել է տուգանք և դրվել է փոխհատուցման վճարման պարտավորություն: Դիմումատուն սահմանադրական բողոք է ներկայացրել Սահմանադրական դատարան, որը 1997թ. մերժվել է:

### **Եվրոպական դատարանի վերլուծություններն ու եզրակացությունը**

Դատարանը նշել է, որ «Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության էական հիմնասյուններից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են

ընդունվում կամ համարվում են անվնաս, այլևս այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Այս ազատությունը ենթակա է որոշ բացառությունների, որոնք պետք է նեղ մեկնաբանության ենթարկվեն:

Այս սկզբունքները առավել կարևորվում են մամուլի պարագայում: Թեև մամուլը չպետք է անցնի ընդունված սահմանները, որոնք նախատեսված են այլոց հեղինակության կամ իրավունքների պաշտպանության համար, այն պարտավոր է ներկայացնել հանրային շահին առնչվող տեղեկություններ և գաղափարներ:

Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռնում պաշտպանելու նաև այլոց հեղինակությունն, այն է՝ բոլոր անձանց հեղինակության պաշտպանություն է նախատեսում, և այս պաշտպանությունը տարածվում է նաև քաղաքական գործիչների վրա, նույնիսկ երբ նրանք չեն գործում որպես մասնավոր անձինք, բայց այս դեպքում նման պաշտպանության պահանջները պետք է կշռադատվեն՝ քաղաքական հարցերի բաց քննարկման շահերից ելնելով:

Որոշելու համար, թե արդյոք միջամտությունը անհրաժեշտ էր «ժողովրդավարական հասարակությունում», Դատարանը պետք է ուրոշի, թե գանգատի առարկա միջամտությունը բխում է «ճնշող հասարակական կարիքից», այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին», եւ իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով ներկայացված պատճառները «վերաբերելի են եւ բավարար»: Պետությունը ունի «հայեցողության լուսանցք» որոշելու համար, թե արդյոք կարիքը առկա է, և ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն:

Վերոգրյալ սկզբունքների կիրառումը սույն գործով.

Սույն գործով Լոպես Գոմես Դա Սիլվան դատապարտվել է մամուլի միջոցով զրպարտության համար այն արտահայտությունների համար, որոնք նա օգտագործել է իր խմբագրականում պարոն Ռեսենդին բնութագրելու համար: Լիսբոնի վերաքննիչ դատարանը գտել է, որ «գրոտեսք», «ծաղրածուական» և «կոպիտ» արտահայտությունները վիրավորական էին և անցնում էին արտահայտվելու ազատության սահմանները: Վերաքննիչ դատարանը գտավ, որ այդ արտահայտությունները չէին կարող վերաբերել պարոն Ռեսենդի քաղաքական

հայացքներին միայն, այլև ուղղված էին անձնապես իր դեմ: Սահմանադրական դատարանը իր հերթին չգտավ որևէ սահմանադրական սկզբունքի խախտում դատարանի կողմից համապատասխան նորմերի մեկնաբանման և կիրառման մեջ:

Դատարանի համար կարևորվում էին հետևյալ հանգամանքները. նորությունը հրապարակվել է օրաթերթում, որի խմբագիրը դիմումատուն էր, ինչպես նաև այս նորությունը հրապարակվել էր լրատվական գործակալության կողմից: Համաձայն այս նորության՝ Ժողովրդական կուսակցությունը խնդրել է պարոն Ռեսենդին որպես թեկնածու հանդես գալ Լիսբոնի մունիցիպալ ընտրություններում:

Իր խմբագրականում դիմումատուն արձագանքել է այդ նորությանը արտահայտելով իր կարծիքը պարոն Ռեսենդի քաղաքական համոզմունքների և գաղափարախոսության վերաբերյալ և անդրադառնալով ընդհանրապես Ժողովրդական կուսակցության քաղաքական ռազմավարությանը իր համար թեկնածու ընտրելու գործընթացում: Նման իրավիճակը պարզ է, որ ենթադրում է քաղաքական քննարկում ընդհանուր շահերին առնչվող թեմայով, մի ոլորտ, որտեղ Դատարանը համարում է, որ արտահայտվելու ազատության սահմանափակումները պետք է նեղ մեկնաբանության ենթարկվեն:

Դիմումատուի հողվածը և մասնավորապես այն արտահայտությունները, որ օգտագործվել են դրանում, կարող են դիտարկվել որպես վիճահարույց: Սակայն նրանք արդարացում չունեցող հարձակում չեն հանդիսացել անձի նկատմամբ, քանի որ հեղինակը հիմնավորում է դրանք օբյեկտիվ պարզաբանումներով: Դատարանը նշում է, որ այս բնագավառում քաղաքական խոսքը հաճախ տարածվում է նաև անձնական բնագավառի վրա: Այդպիսիք են քաղաքականության և գաղափարների ազատ քննարկման վտանգները, որոնք հանդիսանում են ժողովրդավարական հասարակության երաշխիքները: Հետևաբար, դիմումատուն կարծիք է արտահայտել, որը ձևավորվել է պարոն Ռեսենդի քաղաքական համոզմունքներից, որն իր հերթին մամուլի մեկնաբան է: Եթե դրա համար չլինեին որևէ պաշտպանող փաստեր, այս կարծիքը նույնպես կարող էր դիտվել որպես չափազանց, բայց հաստատված փաստերի լույսի ներքո դա այդպես չէ այս գործով: Եվ վերջապես Դատարանը հիշեցնում է, որ լրագրողական ազատությունը ենթադրում է չափազանցության և սադրանքի որոշակի աստիճան:

Պարոն Ռեսենդի կողմից արտահայտված տեսակետները սուր, պրովոկացիոն և առնվազն վիճահարույց էին: Կարելի է եզրակացնել, որ դիմումատուի հողվածի ոճը ազդեցության է ենթարկվել պարոն Ռեսենդի ոճից: Բացի դա, խմբագրականում բերվել էին Ռեսենդի վերջին հողվածներից բազմաթիվ հատվածներ, հեղինակը, փաստորեն գործել է լրագրողի մասնագիտության կանոններին համապատասխան: Այսպիսով, արձագանքելով այդ հողվածներին՝ նա հնարավորություն է տվել ընթերցողին ձևավորելու իրենց սեփական կարծիքը: Դատարանը մեծ կարևորություն է տալիս այդ հանգամանքին: Թեև նրա նկատմամբ կիրառված սանկցիան չնչին էր, նրան դատապարտելը ընդհանրապես համաչափ չէր հետապնդվող նպատակին:

**Դատարանը միաձայն ճանաչեց 10-րդ հողվածի խախտում:**